ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ
(Ա.Հ.Քյուրքչյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ վաստակաշատ պատմաբան և մանկավարժ, Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Հայրիկի Քյուրքչյանի ծննդյան 60 և դիտամանկավարժական գործունեության 35 տարին:

Ծնվել է 1941 թ., Երևանում, տոհմիկ և ավանդապահ մտավորականի ընտանիքում: 1963թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը և նույն տարում ընդունվել այդ ինստիտուտի ասպիրանտուրա՝ ԽՍՀՄ պատմություն մասնագիտությամբ:

Ա.Քյուրքչյանը իր գիտական գործունեությունը նվիրել է հայ պատմագիտության կարևորագույն մի հիմնախնդրի՝ հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրությանը: Այս թեմայով 1970թ. նա պաշտպանեց «Հայ-ռուսական առևտրատնտեսական կապերը XVIII դարի առաջին քառորդում» թեկնածուական ատենախոսությունը: 1971 - 1995թթ. Ա.Քյուրքչյանը զբաղեցրել է նույն ինստիտուտի ԽՍՀՄ պատմության ամբիոնի վարիչի տեղակալի, ապա նաև պատմաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնները: Գիտակազմակերպչական ընդունակությունների ու մարդկային բարձր առաքինությունների շնորհիվ 1995թ. նա ընտրվեց Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում:

1992թ. Ա.Քյուրքչյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «1826 - 1828թթ. ռուս-պարսկական պատերազմը (պատմություն և պատմագրություն)» թեմայով: Գիտնականի շատ աշխատություններ հրատարակվել են նաև ռուսերեն ու ֆրանսերեն:

Ծանրակշիռ են Ա.Քյուրքչյանի մենագրությունները՝ նվիրված 1826 - 1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմությանը: Պատրաստ է հրատարակման մեկ մենագրություն և մեկ գրքույկ՝ նվիրված հայ-ռուսական առևտրատնտեսական կապերին և Օշականի ճակատամարտին:

Ա.Քյուրքչյանը, իրոք, անհատականություն է, որ լիուլի դրսևորում է գիտնական-մանկավարժի և ազնիվ մարդու, կայուն և չիտակ սկզբունքների տեր քաղաքացու, զգայուն և նվիրված ընկերոջ հատկանիշները: Նրա գործն ու վաստակը ապահովել են իր համար բարի անուն, սեր ու հարգանք՝ գիտական շրջաններում, աշխատանքային և ուսանողական միջավայրում: Պրոֆեսոր Քյուրքչյանն այսօր գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, և գիտական հասա-

բակայնությունը, ուսանողությունը բազմավաստակ մանկավարժին և արգասավոր գիտնականին ցանկանում են առողջություն, երկար տարիների բովանդակալից ու արգասավոր կյանք, ստեղծագործական նոր մտահղացումների իրականացում

Կ.Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
Հ.Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Հանդեսի խմբագրությունը ևս շնորհավորում է վաստակաշատ գիտնականին՝ նրա ծննդյան 60-ամյակի առթիվ և մաղթում քաջառողջություն ու կորով իր գիտական արդյունավետ գործունեության ասպարեզում: